# ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 79-Ա |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (03.02.2026-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Հրապարակվել է միասնական կայքում |
| Ընդունող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ընդունման ամսաթիվ | 02.02.2026 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 02.02.2026 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 03.02.2026 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 79-Ա

### «ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման հավելվածի 106-րդ և 107-րդ կետերին համապատասխան`

1. Հաստատել «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները` համաձայն հավելվածի։

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ն. Փաշինյան**

Երևան

02.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված**
**ՀՀ վարչապետի**
**N 79-Ա որոշման**

### «ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| NN ը/կ | Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտի նախագիծը ընդունելու ժամկետը | Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական աղբյուրը | Իրավական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Ռիելթորական գործունեության որակավորման քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ վճարովի վեցամսյա կրթական ծրագրեր հաստատելու մասին» Կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանի նախագիծ | Կադաստրի կոմիտե | | 2026 թվականի մայիսի 13 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մաս |
| 2. | «Ռիելթորի մասնագիտական որակավորման քննությունների անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգը, որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության | Կադաստրի կոմիտե | 2026 թվականի օգոստոսի 1 | 2026 թվականի նոյեմբերի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս, 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 22-րդ հոդվածի 2-րդ մաս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | որոշման նախագիծ | | | | | |
| 3. | «Ռիելթորի մասնագիտական որակավորման քննությունների հարցաշարերը և առաջադրվող հարցերը, որակավորման վկայականի ձևը հաստատելու մասին» Կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանի նախագիծ | Կադաստրի կոմիտե | | 2026 թվականի նոյեմբերի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մաս, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր, 22-րդ հոդվածի 3-րդ մաս |
| 4. | «Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպություն, ռիելթոր (այդ թվում` անհատ ձեռնարկատեր հանդիսացող) և անշարժ գույքի կառավարիչ (այդ թվում` անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հաշվառվելու և հաշվառումից հանելու վերաբերյալ դիմումները և կից փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը, դիմումի ձևը և բովանդակությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կադաստրի կոմիտե | 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 5. | «Միասնական տեղեկատվական համակարգի վարման, շահագործման և օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կադաստրի կոմիտե | 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ մաս, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 6. | «Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման գործունեության ուսումնասիրություն իրականացնող մասնագիտական հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» Կադաստրի կոմիտեի ղեկավարի | Կադաստրի կոմիտե | | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հրամանի նախագիծ | | | | | |
| 7. | «Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման գործունեության ուսումնասիրություն իրականացնող մասնագիտական հանձնաժողովի գործունեության և ուսումնասիրու-թյունների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կադաստրի կոմիտե | 2027 թվականի հունվարի 18 | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 20-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 8. | «Միասնական տեղեկատվական համակարգի հետ անշարժ գույքի վաճառքի կայքերի փոխգործելիության կարգը և այդ կայքերի նկատմամբ նվազագույն պարտադիր պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կադաստրի կոմիտե | 2027 թվականի հունվարի 25 | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մաս, 15-րդ հոդվածի 6-րդ մաս, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 9. | «Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման գործունեության ուսումնասիրություն իրականացնող մասնագիտական հանձնաժողովի անդամների թեկնածուների ներկայացման և ընտրության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կադաստրի կոմիտե | 2027 թվականի փետրվարի 8 | 2027 թվականի հունիսի 1 | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ռիելթորական գործունեության մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-387-Ն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և 20-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 22-րդ հոդվածի 4-րդ մաս |

**Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար** **Ա. Հարությունյան**

02.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ